

ՊԱՏԵՐԱՆՔ

ՊՈԼԿԱՐԱ


Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆ ԽԻԿ



Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Ծրարացման տարի
20 ամսիկով

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրողները եւ

չեն տրուիր

ՄԵՐ ԹՐՔԵՐԵՆ ԲԱԺԻՆԸ

Մեր «Թրքախօս երիտասարդները» խորագրով խմբագրականին առթիւ Սօֆիայէ Ընթերցող ստորագրութեամբ նամակ մը ստացա՞մք ոչ կրէ մեզ «Եթէ կուգէք որ թուրքերէն լեզուն իսպառ վերնայ մեր բնական լարկերէն, նախ դուք ձեր թերթի թրքերէն մասը վերցուցէք եւն»:

Մենք ուրիշ առթիւ ալ բացատրած ենք թէ ինչ հարկէ ստիպեալ իրԱՌՈՒՆԻՔԻ լուրերու մասը թրքերէն կը հրատարակենք:

Անվիճելի է թէ ժողովուրդի մը համար հրատարակուող թերթ մը այդ ժողովուրդին հասկցած լեզուովը գրուած ըլլալու է, որպէս զի աւելորդ անհասկարգին ալ օգտակար ըլլայ: Որովհետեւ Պուլկարահայոց տարեւոր դասակարգը մեծաւ մասամբ հայերէն չը հասկընար ու միայն թուրքերէն կը խօսակցի, ուստի պէտք ունէր իր հասկըցած լեզուով ազգ. թերթի մը ստիպուեցանք իրԱՌՈՒՆԻՔԻ մէկ երեսը, լուրերու բաժինը, թրքերէն գրել: այս միջոցաւ ոչ թէ միայն մեր թրքախօս եղբայրները ազգային ազատ թերթ մը կարդալու զրկուէին սպասեցինք, այլ եւ անոնք իրԱՌՈՒՆԻՔԻ թրքերէն բաժինը կարդալէ յետոյ, իրենց պարագայ ժամերուն անոր հայերէն էջերն ալ աչքէ անցնելով, տակաւ առ տակաւ հայերէնը եւս հասկընալ սկսեցին: Այս տեսակետով թէ կենարիացիք և թէ Պուլկարացի թրքախօս ազգայիններէ շատեր մասնաւոր երախտագիտութիւն յայտնած են մեզ ըսելով թէ, թրքերէն մասին համար իրԱՌՈՒՆԻՔԻ կատանան ու այդ շնորհիւ հայերէնին ալ ընտելանալ սկսած են:

Մենք ինչ իրաւունք ունէինք մեր տարեւոր ազգայինները զրկելու հայրենական, քաղաքական և ներքին լուրերէ, երբ անոնք կը հետաքրքրուին ասոնցմով: Հրապարակագրի մը աւագ պարտականութիւնն է իր պատկանած ազգին կամ համայնքին ամէն դասակարգին հասկանալի լեզուն կամ լե-

զունները գործածել: Ինչպէս որ Պուլկարի մէջ գոյութիւն ստացող բոլոր հայ թերթերը առաջնօրէն մասամբ թրքերէն հրատարակուած են: Բայց այս չնշանակեր թէ բոլոր պուլկարահայ խմբագիրները թուրքերէնէ կախորժին: Ընդհակառակը, մենք կատենք այդ լեզուն, մեր թշնամիին լեզուն ըլլալուն պատճառաւ: և պարտաւոր ենք ամէն միջոց ցոյց տալ մեր ազգայնոց որ օր առաջ վտարիւ ջանան զանի իրենց յարկերէն: Այդ օրը մենք զմեզ երջանիկ պիտի համարենք միայն ու միայն հայերէն կարենալ գրելով:

ԳՈՒՐՄԵՔ

ՕՐՀԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՒՌՈՒՆԻ

Ս. Էմիլիանովն Ս. Միւրումիան չափազանց անարդարաբար հետեւեալը կը յայտարարէ:

Նորին Ս. Օձուրիւն Տ. Տ Ս. Կրտիշ Սրբազնագոյն Հայրապետն ամենայն Հայոց որոշել է, յաջորդութեամբն Աստուծոյ՝ սրբալոյս միւրումիան օրհնութիւն կատարել առաջիկայ սեպտեմբերի 28ին, վարագայ Ս. Խաչի տօնի օրը, որ տաճկերորդ տարեդարձն է իւր Գահանայապետական Օծման:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրէնութեամբ յատուկ հրուէներ կուղարկուին մեր վիճակաւոր առաջնորդներին: Փոխանորդ վարդապետներ, ցանկացող վանահայրեր և եկեղեցեաց աւագերէցները կարող են այս սրբազան հանդիսին ներկայ գտնուել՝ ըստ կարելոյն մեծ թուով ալ եկեղեցական պաշտօնէից հետ:

Օր առաջ հրաւեր է կարգադրուած այսու նաեւ ի սփիւռս աշխարհի տարածեալ հայ ժողովրդեան, որի իւրաքանչիւր անդամը Միւրումի իման Տաճարում օրհնուած սուրբ միւրումի գրոշմն է կրում իւր ճակատին և այդպէս միանում Գրիստոսի հօտին՝ պատրաստուել խունեցում բազմութեամբ դիմելու դէպի հանուրը Հայաստանեայց հոգեւոր ծննդեան մայր այդ սուրբ տաճարը, ս. Հոգ.

ւոյ շնորհած առատածիր զեղման խորհրդուոր ժամին: Յիշելով ինչ անգամայն, որ 1600-րդ տարին է բոլորում այն յաւիթայիլատակ օրից, երբ երկնային ցուցմամբ հրաշակերտ տաճարի լուսեղէն կամարները ձգուեցան, հոգանի և անքոյթ նաւահանգիստ լինելու Հայուրիւն դարերի յորձանքի դէմ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁԲ

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Յոյն ազգի չափազանց եսամոլ բնաւորութիւնը՝ զինք երբեմն հակամարդկային, հակաքրիստոնէական եւ մինչեւ իսկ ճիւղաւորի ձեռնարկներու կը մղէ: Այս վերջին տեսակէն են անցեալ օր Աթինայի մէջ պատահած մէկերկու նոր դէպքերը, զորս պոլսական թերթեր հետեւեալ կերպով կը պատմեն, եւ որ ամբողջ աշխարհի մամուլին մէջ արձագանք գտած է:

«Հելլենական բանակէն մէկ քանի սպաներ Աթէնքի Օսմ. դեսպանատունը դիմելով՝ փափաք յայտնած են կայսերական կառավարութեան ծառայութեան մէջ մտնելու, Պուլկար աւագանները (1) նուաճելու համար Այս փափաքը յայտնողներուն թիւը հազարը կանցնի՝ սպայ թէ զինուոր: Աթէնքի Օսմ. դեսպան Ռիֆաթ պէյ, սակայն, շատ քաղաքավար կերպով մը գիտել տուեր է թէ՝ քիչ ատենէն արդէն բոլոր վեհափառ Պուլկարները որոնք կը փորձեն հանրային անդորրութիւնը խանգարելու, Եւրոպական Թուրքիայէն դուրս պիտի վտարուին՝ շնորհիւ քաղաքային եւ զինուորական իշխանութեանց կողմէ ձեռք առնուած ազգու միջոցներուն: Հելլեն պատուիրակները մեկներ են դեսպանատունէն՝ խիստ զոհ մնացած Ռիֆաթ պէյի ընդունելութեան:

«Յունաստանի թագաւորին անուան տարեդարձին առթիւ Աթէնքի համալսարանին ուսանողներուն կողմէ տըրուած հացկերոյթին ատեն Օսմ. հպատակ ուսանողները բռնակ առաջարկեցին Վեհ. Սուլթանին թանկագին կենաց, մինչ նուագախումբը Համիտիէ մատը կը թնդացնէր: Բոլոր ներկաները «կեցցէ՛ Վեհ. Սուլթանը» գոչեցին: Դեսպան Ռիֆաթ պէյի պաշտօն յանձնուեցաւ կայս. գոհունակութիւնը հաղորդել թէ՛ համալսարանի

ուսանողներուն եւ թէ այն սպաներուն որոնք առաջարկած են կայս. կառավարութեան ծառայութիւն մատուցանելու:

Աթէնքի շատ մը թերթեր ալ Աթինայի դէպքին առթիւ պուլկար հայրենասէրներու գէժ անուանարկիչ յողուածներ գրելէ զատ, յարձակում կընեն Եւրոպական պետութեանց քաղաքականութեան գէժ ըսելով թէ Եւրոպան ինչո՞ւ չձգեր որ Թուրքիոյ եւ Պուլկարի մէջ պատերազմ բացուի: որպէս զի պուլկար յեղափոխականներու գործունէութիւնը Մակեդոնիոյ մէջ միանգամ ընդմիջտ վերջ գտնէ: մինչդեռ նոյն Եւրոպան 1897ին ձգեց որ Սուլթանի բանակը Յունաստան արշաւէ: Յոյն թերթերը կաւեցնեն նաեւ թէ Արեւելեան Ռումէլիոյ Պուլկար իշխանապետութենէն ետ առնելու է եւայլն:

Յոյները երբ անգամ մը գրգռուին յիշողութիւն, տրամաբանութիւն եւ ամէն լաւ յատկութիւններ կը կորսնցնեն: Յոյն թերթերը չեն ուղեր յիշել որ 1897ի պատերազմին Յունաստան ինք պատճառ տուաւ, նախ զընդապետ Վաստը քանի մը վաղ առաջով կրէտէ զրկելով, եւ սահմանադրութեան յոյն ղալիզախաններուն առջեւ բաց ձգելով: մինչդեռ պուլկար իշխանապետութիւնը այդ խռովայնոյ ընթացքներէն եւ ոչ մին չունեցաւ ցարդ:

Յոյները չեն ուղեր նաեւ յիշել որ յունական բանակին թէ՛սալիոյ եւ Եփիւրոսի պարտութենէն քիչ յետոյ չնչին պատճառով մը Եւրոպան ինպատու յունաց կրէտէն ինքնավար բրաւ, յոյն արքայազունի մը իշխանութեան տակ: մինչդեռ նոյն Եւրոպան այնչափ արեւնաճողութիւններէ վերջ Պուլկարիոյ նպատակաւոր քայլ մը առած չէ դեռ Մակեդոնական խնդրոյն առթիւ, որուն մէջ գոռեղ ընթացք մը ունեցած է ցարդ պուլկար իշխանապետութիւնը:

Եւ որպէս զի կատարեալ ըլլայ Յոյներու ցոյց տուած սա վերջին խելագարութիւնը, անոնք լրջօրէն նկատողութեան առարկայ կընեն «մի ինչ որ» յոյն երեսփոխան Տօքթ. Պէլլոյի այն ցնորական ծանօթ ծրագիրը որով թրքա-Յունական Բիւզանդական կայսրութիւն մը կազմել կերպարեն:

Ա. Վիդու քիւնս...

Գ.

ՍԱԳՈՒՆԻ-ԱՐԶՈՒՄԱՆԵԱՅ ԿՈՒՐԱՆԱՆ

— 3 —

Մեծ. Գ. Խմբագիր

Ձեր լրագրի թիւ 30-ի մէջ «Սոս. կայի ոճի մը» առաջնորդող յօդուածում խիստ համարձակօրէն հոգեկեղէնք թէ Մշեցի Միսն հայ յեղափոխութեան ինքնապաշտպանութեան գրօշը ձեռքին մէջ բռնած բռնած՝ երկիր կը մտնէր. բայց Արզումանեանց-Սագունի Հնչակեան կնտրօնի հրամանով չարաչար կսպաննուի Փոթիին մէջ... չարերէ զեղաբուծած եւն. եւն.:

Թերթիդ յիշեալ համարը կարգաւորուց մի օր յետոյ պէպքը պատահած տեղից նամակ ստացանք, որից պարզապէս երեւում է 1) որ Մշեցի Միսն ոչ թէ հայրենիք է գնալիս եղել «ինքնապաշտպանութեան գրօշը ձեռքին», այլ Շահրիմանի ու Գրիգորեանի կենտրոնի հրահանգով կովկաս. ու Ռուսաստան է գնացել մեր մասնաճիւղերի մէջ պառակտուածներ ձգելու նպատակով 2) որ Մշեցի Միսն սպանուել է ոչ թէ «Արզումանեանց-Սագունի կնտրօնի հրամանով», ինչպէս որ բարեհաճում էք հոգեկեղէնք, այլ հրապարակաւ տեղի ունեցած փոխադարձ կռուի մէջ, երբ նա զիմացիներէր ամենանուիրական զգացմունքները վիրաւորելուց եւ ոստակոխ ընելուց զօտ, նաեւ առաջինն ինք է զէնք բարձրացրել նրանց դէմ:

Շատ ցաւում ենք որ այդ կարեւոր եւ ջանքալից վաւերացող լրագրի մասին չենք կարող հրատարակել շատ հաւակալի պատճառներով որպէս զի հասարակութիւնը միանգամայն տեսնէր թէ մարդիկ ինչպիսի չարամիտ եւ նենգաւոր զրպարտութիւններէր են րնդունակ իրենց համար անհաճելի անձանց կամ մարմիններին վարկաբեկելու համար: Մենք այդ վաւերացող լրագրի կուսակցութիւնը մեր Մասնաճիւղի միջոցով կարգաւորուեալ եւ համոզուեալ համար ճշմարտութեան մէջ, սակայն իրաւունք չենք տալիս որ եւ է կէտ տպագրել նրա բովանդակութիւնից շատ յարգելի պատճառներով:

Առաջարկում ենք տպագրել մեր սոյն երկտողը Ձեր լրագրի մօտակայ համարներէց մէկում իբրեւ ամենաօրինական միջոց Ձեր սոսկալի զրպարտութիւնը հերքելու համար. կամ հրապարակ հանել «ի ձեռքին եղած այն վաւերացողութիւնը, որոնք պիտի ապացուցանեն թէ՛ «Շահէնի» սպանել տալու հրահանգը Արզումանեանց-Սագունի զիւհարներէն ելած է»:

Հակառակ դէպքում, եթէ խոյս կըտաք մեր այս շատ օրինաբար, առաջարկութիւնը կատարելուց, այն մասնակց պիտի ընդունինք Ձեր գրածները զիտաւորեալ զրպարտութիւն, իսկ զրպարտչի հետ կը վարուինք ինչպէս հարկն է:

Հնչ. Կոս. Կենդր. Վարչ. Կողմից
Ատենադպիր Ատենապետ
Հայկապոնի Ս. Արսաւադ
(Կնիւի)

Մայիսի 12 1903
Լոնտոն

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Վերի նամակը կը հրատարակենք ոչ թէ անոր վերջի տղով ցոյց տրուած սպառնալիքին պատճառաւ, այլ անկողնակալութեան պարտք մը կատարած ըլլալու եւ այդ առթիւ ոճի մասին մեր ընթերցողաց քիչ մը աւելի լուսաբանութիւն տալու համար:

Նախ վերի նամակով մեզ վերագրուած «զրպարտութիւն եւ զրպարտիչ» բառերը նոյնութեամբ կը վերագրուենք իրենց տէրերուն, այն տիրական իրաւունքով որ ՍՈՍԿԱԼԻ ՈւձԻՐ ՄԸ վերագրող մեր խմբագրականին հիմ ունենիք հետեւեալ վկայութիւնը՝ որ վստահելի աղբիւր է մը մեզ կը հասնէր, եւզոր ջակերտներու մէջ նոյնութեամբ հրատարակած էինք. «Ի ձեռքին կայ կնքուած պաշտօնական վաւերացողութիւնը իրաւունքով որ Շահէնը սպաննել տալու հրահանգը Լոնտոնի Կեդրոնէն՝ Սագունի-Արզումանեանց անունով զիւհարներէն ելած է»:

Ասոր մօտ գիտ ուրիշ վկայութիւններ յաջորդաբար եկան հաստատել թէ Շահէնի սպանման ոճաւորութիւնը:

գրգռուել Լոնտոնէն եղած է ուղղակի: Արզումանեանց-Սագունի կեդրոնին վրայ ծանրացած այս անգամ ամբաստանութիւնը հաստատող վաւերացողութիւնը զրկուել է արդէն յեղափ. ձեռնաս մարմնի մը՝ որ, ինչպէս կը հաւատաւոր մեզ, ի մօտոյ հրապարակ պիտի գնէ զանոնք:

Նաեւ ողբացեալ Շահէնը գերեզմանէն անդին ալ սեւացնելու նպատակաւ գրուած վերի նամակին հակառակ, իր սրտակից ընկերներուն վկայութիւնները կը հաստատեն թէ նա պատրաստուած էր քիչ ժամանակ յետոյ երկիր գտնուելու: Այս ալ անհերքելի է:

Իսկ այդ նամակի այն տողերը թէ «հրապարակաւ տեղի ունեցած փոխադարձ կռուի մէջ, առաջինն ինքն է (Շահէնը) զէնք բարձրացրել նրանց դէմ» այլանդակ խեղաթիւրուած մըն է. ինչ որ բացարձակ կը տեսնուի իբր «Վախճախի» եւ կարեւոր վաւերացողութիւնը՝ Սագունի-Արզումանեանց Կենտրոնէն մեզ զրկուած այն պատճէնէն որ Շահէնը սպաննողներուն արեւնոտ ձեռքովը գրուած տեղեկագրին ընդօրինակութիւնն է:

Հոն սպաննիչները իրենց բերանով ապուշ կերպով կը խոստովանին թէ՛ Շահէնի մեղմ խօսքերուն իրենք լուստանքներով պատասխանած, զանի ապակաւ ձեռքով մեր վերջապէս սպաննած են. ու այս անօրինակ գաղափարները գործած են սրտի այն գրգռումով ինչ որ ներշնչուած է իրենց Սագունի-Արզումանեանց Կենտրոնի եւ Ռուսչուքի Մասնաճիւղին չրջաբերականներովը ու նամակներովը:

Այո՛, ոճագործները այդպէս կը խոստովանին իրենց «Վախճախի» եւ կարեւոր վաւերացողութիւնը մէջ եւ այդ թուովը՝ որ բաւական է ոճագործները ու մեղադրիչները ցոյց տալէ զատ Շահէնի անմեղութիւնը հաստատել, Կենտրոնը չուղեր որ հրատարակենք «չատ յարգելի պատճառներով?» Մենք այդ թուովը չհրատարակելու ուրիշ «յարգելի պատճառ» չենք տեսներ, բայց եթէ ատով վճռապէս գոյանալիք հանրային զատապարտութիւնէն խուսափելու ուզելին:

Մէկ խօսքով կրօնք Արզումանեանց-Սագունի Կենտրոնին, եթէ Ձեզ եւ ձերիները պաշտպանելու քաջասրտութիւնը ունիք, արտօնեցէք մեզ որ ձեր զրկած այդ վաւերացողութիւնը հրատարակենք: Ուրիշ փաստ պէտք չէ. անով ժողովուրդը կարող է դատել ու իր վճիռը տալ:

ԽՄԲ.

ԹՂԹԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՊԱՏԱՆԱԿԱՆ ԹՂԹԱՑԻՍ)

Գաւիթի 30 մարտ

Իր փառաւոր անցնալով ծանօթ եւ հայակապ այս մայրաքաղաքին մէջ կը գտնուին 4000-ի մօտ զաղթական եւ տեղացի Հայեր: Բայց ասոնք քիչ քան ցառութեամբ զմրած եւ մեծիկան ստանալու թեամբ կը նային զԼուի իրենց ազգային պարտականութիւնները. երիտասարդութիւնն ալ մեռած է: Չլայ ու է կատարեալ կաղնակերպութիւն մը, եթէ կան մի քանի խարխուղ ընկերութիւններ, անոնք ալ անձնական կոխակերպ վրեժ առած չուենին (՝):

Լսարան-Ընթերցարան մ'ունինք, Աստուած մի արասցէ, թափուր վիճակի մէջ, իւր օրհասական մօտ կը գտնուի. եթէ այսպէս շարունակէ այդ հաստատութիւնն ալ տարի մը կ'անք հազիւ ունենալ կը կարծուի, որովհետեւ իր պիտածէն շատ յիշարացած է չորհրդ մեր աղիւն (՝) ձրի ընթերցողներուն:

Թերթ մ'ունինք «Արշալոյս» այն ալ կանոնաւորութեամբ չը հրատարակուի...:

Գիւլ Տիւն

Դիւ. Խմբ. — Արդէն հիմակ այն տեսակ շրջանի մը մէջ ենք որ, ուր որ երթանք, ազգային գործունէութիւն փնտրելու, կը հանդիպինք միմիայն ներքին կոխակերպ, որոնք արդենք են հակըդդէմ յեղափ. կոսակցութեանց:

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ

(78)

ԹԻՍ. ՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲԱՆԱՆԻ ՏԱՐԻՆ

- Կուզէի որ կառավարութիւնը կամ թէ Ձեր վստմութիւնը պաշտօն մը տար ինծի եւ վաւերացողութիւնը հաստատէր զայն: Երբ գեղերը մտնէի, մէկը չէր կրնար դէմ կենալ խօսքիս եւ չէր կրնար մերժել հրաւերս:
- Ձե՞ որ ձեր փափաքն է ծառայել...
- Անշուշտ:
- Ձե՞ որ դուք չորս հազար մարդու գլուխը կը գտնուիք...
- Ժի՛շք է:
- Ուրեմն, ամենայն սիրով կընդունիմ ձեր պայմանը. Այս վայրկեանէս պատրաստ է ձեր պահանջածը: Նոյնպէս վստահ եղէ՛ք թէ Սուլթանէն ալ պատուանշան մը պիտի ընդունիք քիչ ատենուան մէջ. բաւական է որ դուք լիովին կատարէք ձեր պարտականութիւնը:
- Իհարկէ... երբ մարդ մը իր խղճին վրայ կը գնէ պարտականութիւն մը, պէտք է կատարելու:

- աշխատի: Ես դասալիք չեմ ըլլար: Հայրենիքի սիրոյն համար նահատակուելը վերջին ուխտս եղած է...
- Վալի փաշան այնքան դիւրեւած էր այս կեղծ պէկին խօսքերէն, որ ժամանակ չուենցաւ հարցնելու թէ ո՛ր կողմերէն եւ իր ցեղերուն ինչ անուն կը արուէր: Միայն թէ թիկնապահին հրամայեց հարկ եղած պաշտօնական հրամանագիրը պատրաստել, որպէսզի այն օրը յանձնուէր երկրին ու թագաւորին ծառայող մարդուն:
- Ճաշի ժամանակ իր հետը սեղանը նստեցուց ու բարեկամութեան կենացը դաւաթներ պարպեց, ըսելով.
- Աստուած օրք չա՛տ տալ մեր Սուլթանին... Կէս օրէն ետք, Ներսէս Արծրունին ընդունած էր Վալի փաշայի հրամանագիրը, որուն մէջ լիազօր իրաւունք արուած էր կարծեցեալ պէկին, որ կառավարութեան հրահանգը կարող ըլլար գործադրելու... Նոյնպէս հրամայուած էր քուրտներուն հպատակել ամեն կերպով եւ չը մերժել անոր իշխանութեան ներքեւը մանկու: Վալին ինքը ստորագրած էր զայն, ցոյց տալու համար թէ որքան վստահութիւն ունէր: Մէկ խօսքով, այդ հրամանագիրը՝ զոր Ներսէս Արծրունին ծոցը կը դնէր, հաստատապացոյց մըն էր թէ չարագործ Վալին իր մեղաւորութիւնը ծածկել կուզէր խարճական յայտարարութիւններով եւ հաւատարմիկ կը ջանար թէ խոտովութեան հեղինակները պիտի պատժուին...
- Օ՛հ, մեծ պատուով կը մեկնէր կարծեցեալ պէկը, որուն պարթեւ հասակը, լայն ծակաւոր, զրաւիչ կերպարանքը եւ յաղթական գնացքը փողոցներէն:

- բու. մէջ բաղմունքներ մը կը խոնէր...
- Երբ հեռացաւ քաղաքէն, ան ատեն մտքակեց ձին ու Աւանց գիւղի վերեւէն ուղղակի գէպը Լէզքը յառաջացաւ եւ անկից ալ նապաթալ կողմերը դիմեց:
- Արեւը մար մտնելու ժամանակ կուսաթման սարին ներքեւ հասաւ: Գիտէր թէ խուսմը հոն պիտի գար այդ գիշերը: Հետեւաբար վար իջաւ ձիէն ու ժայռի մը ետին, ապահով տեղ մը քաշուեցաւ: Ձին ալ ծառի մը կապեց: «Խուրճիկն» մէջ հաց, փոխիւղ ու պանիր ունէր. հանեց զանոնք ու սկսաւ ճաշել:
- Բայց փութ անդ մինչեւ կէս գիշերը սպասեց. խուսմը չերեցաւ: Ան ատեն ալ յոյսը կտրեց ու ձիւն վրայ նստուելով իր ճամբան շարունակեց: Իր նստակին էր քանի մը քուրտ պէկերու մօտ երթալ եւ այդ հրամանագրին ազդեցութեամբ հասկնալ թէ ինչ գրութեան եւ ինչ տրամաբարութեան մէջ էին անոնք: Այդ պատճառաւ շատ մը գեղեր այցելեց, ձահվար պէկը տեսաւ. եւ յետոյ Լիւս Անապատի վանքը հասաւ:
- Վանահայրը՝ Պողոս եպիսկոպոսը՝ մեծ ուրախութեամբ մը ընդունեց զինքը:
- Ըսին ինծի թէ վանքը չէք գտնուիր, ըսաւ Ներսէս Արծրունին քուրտերէն լեզուով մը:
- Հապա ո՛ւր կը գտնուիմ, հարցուց Պողոս եպիսկոպոսը:
- Բաղաքը կը գտնուիք:
- Է՛հ, երբեմն... բայց միշտ վանքէն չեմ հեռանար:
- Ես ձեր անունը լսած էի, այդ պատճառաւ. եկայ որ տեսնուիմ ու փափաքս գոհացնենիմ:
- Չափազանց ուրախ եմ, պէ՛յս:

Տօպրիչ 8 մայիս

Կարծէ որ Պոլսկարիոյ Հայոց պատրիարքական Փոխանորդ հայրը շատ չուշանայ իր քայլերը դէպի Տօպրիչ ուղղելու : Վասնզի հոս քիչ ժամանակի մէջ ամէն բան պիտի կորսուի : Կարոց մը կայ, այն ալ այս տարի պուլկար ազգային դրամատան կողմէն պիտի ծախուի : շինութիւնն մնացած պարտքը չը վճարուելուն պատճառաւ : որովհետեւ, ինչպէս կըրեալ, այդ նըպատակաւ կատարուած հանգանակութեան արդիւնքը դեռ չէ յանձնուած դրամատան :

Եկեղեցին ալ երբեմն գոց եւ երբեմն բաց : Թաղական կամ Հոգարար-ձուլիւն չկայ արդէն : Ընտրուածներն ալ մէյմէկ անտեղի պատճառներով հրաժարած են :

Ալ երեւակայեցէք, ի՞նչ վիճակ կրնայ ունենալ մեր քաղաքի ներկան, եւ ո՞ր աստիճան տխուր ըլլալ կը խոստանայ ապագան : Մինչդեռ նայելով Գոլմալի եւ անոր նման ուրիշ քաղաքներու, տեղւոյս ժողովուրդը աւելի բարեկեցիկ է :

Դպրոցը 80է աւելի երկսեռ աշակերտներ ունի : Կր ժողովութե յառաջիկայ տարի ի՞նչ պիտի ըլլայ առնոց վիճակը, քանի որ հոգարար-ձուլիւն չկայ : Եւ բացի աս, մտածող մը անգամ չկայ, ամէն մարդ ուսերը վեր կը թոթուէ ու միայն իր անձնական գործին կը նայի :

Կը կարծեմ թէ Պատր. Փոխանորդ Հայրը ամենէ առաջ այս տեսակ տեղեր այցելելու է : Վասնզի մասնակը շատ սուղ է, երկու երեք ամիս յետոյ ալ աւելի զոտար պիտի ըլլայ ու եւ ի կարգադրութեան յանգելու համար :

Ուրեմ

ՀԱՅ ՎԻՃԱԿԱՆՈՒՆԵՐ

Ասխարհագրում այս օրերս գտել են մի գիակ առանց գլխի, ձեռների եւ ոտների : Այդ գիակը պատկանում էր Իբրահիմով անունով մի թուրքի : Սպանողներն եղել են երկու հայ—Իշխան-

եան եւ Զալալեան, առաջինն արհեստով դերձակ, երկրորդը—լարախագաց : Սպանութիւնը կատարուած է վրիժառութիւնից : Այդ մասին «Զակասպ. Օր.» հաղորդում է հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները : «Իբրահիմովը 12 տարի առաջ Թիւրքիայում եղել է պետական ծառայու. թեան մէջ իրրեւ բէկ. նա մեծ չարիքներ է հասցրել իշխանեանի եւ Զալալեանի ազգականներին : «Եթէ ես կենդանի մնամ,—ասում էր իշխանեանը,—կսպանեմ Իբրահիմովի բոլոր ազգականներին, որովհետեւ նա շատ հայ կանանց, երիտանց եւ ծերունիների արիւն ու արտասուք է թափել տուելու : Բնորոշիչ է իշխանեանի հետեւեալ ցուցմունքը : «Ես իմ ձեռքովս կտրեցի Իբրահիմովի ականջը եւ հաճութեամբ կերայ : Ահա այստեղ է (ցոյց տալով փորը) նրա ականջը» : Սպանութեանը մասնակցող լայախագաց Մկրտիչ Զալալեանն ասել է, որ 12 տարի առաջ Իբրահիմովը, թրքական ծառայութեան մէջ նշանաւոր պաշտօն ունենալով, Վանում յափշտակել էր իւր քրոջը, եւ նրա հետ երեք շաբաթ ապրելուց յետոյ ծախել էր նրան քրդերի վրայ : Միեւնոյն ժամանակ Իբրահիմովը սպանել էր Զալալեանի եղբորը, կտրելով իւր գոհի գլուխը, ձեռները եւ ականջները : այդ բանը պատահել էր Զալալեանի բացակայութեան ժամանակ. նա Վանից հեռացել էր Ռուսիա, եւ ահա, 12 տարի անցնելուց յետոյ, Զալալեանն Ասխարհագում հանդիպել է իւր արիւնարբու թշնամուն : Սպանութիւնից առաջ երեքն էլ, զո՞ր եւ մարդասպանները, քեֆ են արել քաղաքից դուրս գտնուած ձալալեանում : Նոր-Դար

ՄԻՋԱԶՄԱՆՈՒԹԻՒՆ ՄԷ

Մեզ առայժմ անձանթ լինք սրկայ մը, կեղծելով մեր մէկ բարեկամին ստորագրութիւնը : Նամակաւ մը խնդրած էր մեզմէ Թագուր Ս. Ժամ-

կոչեանի ընդ Օր. Թագուհի Թ. Սարգիսեանի նշանուած ըլլալը յայտարարել : Վերջին ժամու Սիւրստէէ մեզ հասած հեռագիր մը ցաւ կը յայտնէ ու կըսէ թէ այդ խաբբայութիւնը ցած թշնամիի մը գործն է :

Այդ կեղծարար սրկան ով որ ալ եղած ըլլայ կը կարծենք թէ իր օձիքը ձեռք պիտի անցնենք, եւ իրեն հետ պիտի վարուինք այնպէս ինչպէս որ պէտք է :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՇՈՅ Առաջն. տեղապահ Տ. Խոսրով վարդապետ հեռագրով մը ծանուցած է Մայրաքաղաքի մէջ պատահած երկրաշարժի աղէտը, տեղեկութիւն տալով թէ 430 Հայոց տուններ քանդուած, 733 անձեր փլուտակներու ներքեւ մեռած են եւ բազմաթիւ անասուններ ու արջառներ սպաննուած են, որով ժողովուրդը զուրկ մնացեր է ապրուստի ու երկրագործական միջոցներից, եւ թշուառութեան ենթարկուած է : Պոլսոյ Գաղ. Ժողովը նկատի առնելով երկրաշարժին պատճառաւ Մայրաքաղաքի ազգայնոց թշուառ վիճակը, անհրաժեշտ համարած է օգնութիւն փութացնել արկածելոց եւ այս նպատակաւ ձեռք առնել պէտք եղած միջոցները :

— Պէ՛լէ՛ձիկի շուկային մէջ պատահած հրդեհէ մը ազգային հասութեաբ կալուած մը մոխիր դարձած ըլլալով, Պոլսոյ Գաղ. Ժողովը որոշած է ընդհանուր շրջաբերական մը ուղղել գաւառային վարչութեանց, եւ յանձնարարել որպէս զի ապահովագրեն այն կալուածները որոնք արժէքաւոր են եւ կրնան հրդեհի վտանգին ենթարկուիլ :

— ՏՓՂԻՍԻ մէջ Ապրիլ 27ին 1200ի չափ գործաւորներ ցոյց մը ըրած են կարմիր դրոշակ պարզելով եւ «ուռա» աղաղակելով : Ոստիկանութիւնը անմիջապէս ցուցարարները ցրուած եւ 63 անձեր ձերբակալած է : Իսկ նահանգապետը ասոնցմէ 33 հոգին բերդարգելութեան ենթարկած է : Ցաւաւալի կէտը այն է որ յանցապարտներու մեծագոյն մասը հայերէ կը բաղկանայ, եւ ասոնք այն դատարարի հայերէն են եղեր, որոնք հայերէնքի խնդիրը ձգած ընկերվարական հարցերով կը զբաղին :

— ԱԽԱՅԻՍԱՅԻ Հայոց Ս. Փլըրիչ եկեղեցւոյ կալուածները ռուս կրթական նախարարութեան կողմէ գրաւուած ըլլալուն դէմ ՏՓՂԻՍԻ առաջնորդարանը դատի դիմած է նահանգային դատարանէն կըրկին այդ կալուածները Հայոց վերադարձնելու վճիռ ստացած էր : Մայիս 2ին նոյն դատը ՏՓՂԻՍԻ բարձրագոյն դատարանին առջեւ վերաքննելով նահանգային դատարանի վճիռը օրինաւոր ճանչցուած ու հաստատուած է : Ըստ որում խնդրոյ տակ եղած կալուածները պիտի առնուին ռուս կրթական իշխանութեան ձեռքէն ու յանձնուին Ախալցխայի Հայոց Ս. Փրկիչ եկեղեցւոյն :

Այս նորագոյն լուրը անուղղակի եւ մխիթարական հերքում մըն է այն հրատարակութեանց որոնք քանի մը շաբաթ առաջ գուժեցին թէ ռուս կառավարութիւնը իր դատարաններուն վճիռներովը Հայոց վերադարձուած կալուածները կրկին կը գրաւէ :

- Թէեւ ներկայ տարւոյս մէջ բուսական խոտովութիւններ ու վատութիւններ տեղի ունեցան մեր երկու ցեղերու միջեւ, բայց կը յուսանք թէ կը դադրին այդ կարգի խնդիրները, այնպէս չէ :
- Վանահայրը կեպարանքը մտայնց ու չուզեց պատահանել :
- Այս կողմերը բաւական վնասուեցան, յարեց ներսէս Արծրունին՝ որ կարծես չը կրնայ վնաս հօր դէմքին այլայլութիւնը :
- Ի՞նչ գիտնամ . . . չեմ ուզեր որ այդ մասին խօսք մը ըլլայ, առարկեց Պողոս եպիսկոպոսը :
- Ինչո՞ւ համար . . . միթէ՞ դուք ա՛յն աղբիւրիկ Պողոս եպիսկոպոսը չէք, որուն անունէն կը գողային Թիմարայ բոլոր քուրա ցեղապետները :
- Այո՛ :
- Ուրեմն . ի՞նչու ձեռնմխի կուզէք ըլլալ :
- Ձեմ խառնութիւն, պէ՛յս :
- Ազգիւ թշուառութիւնը տեսնէք ու հեռու մնա՞ք :
- Ի՞նչ կրնամ ընել :
- Գեղացիներու վրայ յարձակող Գուրու-պէկերուն դիմեցէ՛ք :
- Ե՛ս :
- Այո, դո՛ւք :
- Ի՞նչ պիտի ըսեմ ատ Գուրու-պէկերուն :
- Ըսէ՛ք որ դադրեցուն են իրենց աւերումները :
- Անկարելի՛ է . . . ես կարող եմ ներկայ ժամանակին մէջ ասոնց դիմել ու այդպիսի ծանր առաջարկ մը ընել, քանի որ ամեն յարաբերութիւն խզուած է . . . :
- Մտիկ ըրէ՛ք. շատեր կան որ ինծի պէս կը

- մտածեն եւ պատրաստ են իրենց միայլը ճանչնալու . . . : Պէ՛տք է ժողովուրդին աչքը բանաւք եւ ճանչցունենք թէ մութին մէջ չարագործ ձեռք մը կայ . . .
- Չարագործ ձեռք մը . . .
- Այո՛ :
- Որո՞ւն է այդ չարագործ ձեռքը . . .
- Կառավարութեան ու անոր թագաւորին :
- Կառավարութեան ու անոր թագաւորին :
- Ճիշդ է :
- Ձեմ կրնար ընդունել տրեկա . . . կառավարութիւնն ու անոր թագաւորը մեղսակեց չեն ասանկ չարագործութեանց : Ի՞նչ ապացոյց ունիք :
- Ունիմ ապացոյց . . . բայց գործադրելու կը սոսկամ : Ահաւասի՛կ, կարդացէ՛ք որ հաւատարմ : Ու ներսէս Արծրունին իր ծոցը պահած հրամանագիրը Վանահօր յանձնեց խորին գառնութեամբ մը : Պողոս եպիսկոպոսը վերէն ի վար կարդաց զայն ու սարսափով ըսաւ :
- Ասիկա Վալիի «ինքնագիր գրութիւնն է», պէ՛յս, ինչպէ՞ս ձեր ձեռքը յանձնուեցաւ :
- Իհարկէ, ատանկ գրութիւններ ո՛չ միայն ինծի յանձնուած են, այլ բոլոր Գուրու-պէկերուն . . . Եւ որովհետեւ դարաւոր սղիտութիւնը մեր վրայ ծանրանալով կորսնցուցած ենք Ազգային ոգին, շատերս կոյր գործիք դարձան ենք կառավարութեան ձեռքը : Բայց ասիկա կորստաբեր է ոչ միայն ձեզի, այլ մեզի համար : Այդ պատճառաւ ես տարեր կերպով կը մտածեմ եւ կուզեմ ձեր խորհուրդին դիմել : Արդեօք կընդունի՞ք ինծի հետ միասնալու . . .
- Միասնալու :

- Այո՛ :
- Ի՞նչ ընելու համար :
- Դիմադրելու համար :
- Որո՞ւ դէմ :
- Չարագործ ձեռքերու դէմ :
- Ձեմ հասկնար . . .
- Կառավարութեան դէմ ըսել կուզեմ :
- Կառավարութեան դէմ . . .
- Ի հարկէ :
- Յիշայ մը չկրնար այդ աստիճան յանդգնութեան մը դիմել :
- Յիշայ մը կրնայ այդ աստիճան յանդգնութեան դիմել, երբ ճանչնայ իր պատիւը : Միթէ ձեր մէջը պատուաւոր մէկը չգտնուի՞ր . . .
- Վանահայրը սարսափեց բոլոր մարմնով ու զգաց թէ իր էութիւնը կը ջախջախուէր :
- Պատասխանեցէ՛ք . . . ի՞նչու կը լռէք, չեչտեց ներսէս Արծրունին :
- Ես չեմ կրնար կառավարութեան մը դէմ ապստամբել, մընչեց Վանահայրը խղճուած ձայնով մը :
- Պողոս եպիսկոպոս . . . բացառանքեց ներսէս Արծրունին զայրացած ձայնով մը, գիտցէ՛ք թէ դէմերնիդ կեցողը ֆլայ մըն է . . .
- Յիշայ մը . . .
- Այո՛ :
- Ո՞վ էք դուք :

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԲԻԱ

Օսմանլը տեղափոխին ուսումնական ծրագրերը պիտի փոխեն իշխան վիճակ մեծիսին կենդան հաֆթա վերադարձն օրընմը վե պու պապտե Իրաթն չըգմը օլտըղընը թեկնկրաֆ պիտիտի:

— Պիր մեհնուլ շախս Ֆրանսըղ սեֆարեթ հանդեսին պիր խըղ մեթեբարընա րըզված վատը իլե տինամիթ եերլեշտիրմեք իսթե-տիկի, ֆադաթ գանտըրամայուպ գաշմայա մեհպուր օլտըղը քեզա րուս սեֆարեթ հանդեսին պեր հավա իթմեք մագսետի իլե թեթիպլեր եթե ալընմը վե լաղըմ տախի գա-ղըմը օլտըղըննա տայիր էնվաի շայեթ կեզմեքտե պուլընտըղը Սթանպուլտան պիտիտիթի օլմաղ-լե պեքապեր, իճրա օլընան թմա-զիգաթըն պու շայեթը թմաստիգ իտեմեթի օլտըղը տախի իլավե օլընըր:

Պու կիպի էստսըղ վե միտ-հիշ շայեթարըն մեկպաթը Երլըղ սերայը տըղ. զիրա պու կիպի տեսիսլեր վե սիւմե թետարիք եալանլարլե գոմիթեթե գարըն էլ-չիլերե նեֆրեթ կեթիթեթիսթեթ: Այն եսլանլար էլ մեկն գոմիթեթե-րի ալեյհիլե տախի թեանի իթմիշ իտի:

Սեֆարեթ հանդեսը սըզը սու-րեթտե քօրտոն ալթընա ալընմը-տըրլար:

Ալպանիա

Ալանվուտ ասըլարըն մերքեղի-ատտ օլընան իրեք չեհրինե Օս-մանլը տաքերինին կիրմիշ վե պու պապտե Պապը Ալիտեն թեսիլիյաթ նեշը օլընմը օլմաթը խիլաֆընա օլալապ, կեչեն հաֆթա պեյանը էթեքար իթտիկիթիգ կիպի, տա-հա պիր վաղըթ Արնափուտար ի-լե ուղըաշմազ իգթիգ իտեհեկինի Սթանպուլտան պա թեկնկրաֆ պիլ-տիթուպ, գոմանտոն Եմսի բա-շանլը պիր գաշ ալալ տաքերլե, Բեք թապիր օլընան արնափուտ գապիլեսին իգամեթ իթտիկի տաղըղալա, ճագօվաթըն զարպ ճիհեթինե, տօղրու երիւթմեյե մեհպուր օլտըղընը իլավե իտեյօր-լար:

Քեզա Ճագօվաթըն վե Բեքընե-նին ճեհուպի (հարաւ) ճիհեթլե-րինտե սաքին օլան Հասի նամ գա-պիլեին իգթիկին տախի երիւթ-լե իշխան թեթիպաթ կեթիլ-տիկի իլալ օլընըր: Տիկեր թարաֆտան տախի Տեչանի նամ Մանաստըրըն էթրաֆընտա իսք-եան իտեն արնափուտ րեյիսլերի իլե մեղքիւր Մանաստըրըն սեւա-մեթ իշխան մուսապերե պաշա-մը տըղ. զիրա րուս էլիսի օլ Մանաստըրըն վըզայե օլընմաթընը

սուրեթի մախսուսեթե իտտաա իթ-միշ տիր:

Տահա պուստան 3-4 կիւն էգ-վե մեղքիւր իքի գապիլեթին իթաաթա կեթիլեթինի վե իս-լահաթա գալըն կեթմեք իշխան վաալար իթտիլեթինի Պապը Ալի սուրեթի րեսմիլեթե վե սեվիմեթ էլիլերե պեյան իթմիշ իտի, շիմ-տի պու րեսմի պեյանաթըն սըրֆ հալան օլտըղը մեյտանա չըգմը օլտու: Ֆադաթ թիւրք հիւթիւ-մեթի պու կիպի եալանլարտան ութանմաթ քեթիլեթինե տեթ իթթիլապ իթմիշ տիր:

Մաքեթուհիա

Սեյանիք, Սթիւպ, Մանաս-թըր, Երօտաա և Եանեսա վիլա-յեթլերինե միւնհասար օլան իշխան ճի օրտուլա իլավե օլմաթ իւղը, մեղքիւր վիլայեթլերտեն 16 թա-պուր ասքեր հենիտեն սիլահ ալ-թընա ալընմը տըղ: Եու հալտե մուհարեպե էսնասընտա իշխանի օրտուլըն սանճաղը ալթընտա պու-լընմաթը լաղըմ կեչեն տաքերին իւշ բայրնտան իթիսի հանի 140.000 քիշի պու կիւն սիլահ ալթընտա պուլընուպ, Մաքեթուհիալ պու-կարլարը թագիթիգ վե գոմիթա չեթեթիլեթին թաադիպ իթմեթլե մեշղու տըրլար:

— Մաքեթուհիանը պաղը նօգ-թալարընտա էլան չեթեթիլե վե թիւրքլեր պեյիլեթե միւստեթե-լեթ վաղը պուլմագտա տրը: Պու խուսուստա Սթանպուլտան վե Սթ-ֆիտան ալընան թեֆեթրուաթ պիր պիրինի թուլթմաթըն սե-պեպլե, պուրտաա պահսընը զայիտ ատտ իտեթիգ:

Բոնա Բապրիգանսեի վե Պապը Ալի

Մաքեթուհիաա պուլկար Մեթ-րօթիլեթին զապիթե նեղաթիթի ալթընտա պուլընտըղարընը էն-տեքանտալըն մուսպիրի պեյան իթմեթլե պեյապեր: Բուս Բաթ-րիգանսեի տախիլեթե վե Պապը Ալի պեյիլեթե ճարի օլան տըղ-գաթա շայան մուպայեթեթի պեր վեհեթի ալթի պիտիթիթի:

«Բուս Բաթրիգանսեիլեթին իւշ Սինոտ աղալարընտան իլթեչե-թիլ պիր գոմիթիս կեչեն կիւն Պա-պը Ալի կիտուպ Մատրաղամ իլե կեթիլեթին: Մաքեթուհիաաթի Բուս Մեթրօթիլեթինե էհալի նին թեթսիլեթ օլընմաթ ահվա-լընա տայիր կեչեն րաթթիլարը մեղքիւր գոմիթիս Մատրաղամ թագաթիմ էլլեթի, վե պու մուհիպի թեթսիլեթ ահվալըն իլալը իշխան հիւթեթեթին լաղըմ օլան թեթա-պիրին էլե տլմաթըն րեհա իթտի: «Իշպու միւրաճաթ Բաթրիգ հանդեսին մուսթիլեթ իտարե մեհ-լիլեթինին գարարը իւղը վուղու պուլմուշ տըղ: Մեթրօթիլեթի-տեն չօղլարը Եօաթիմ հպիսկոպուս իլե պեյապեր Բաթրիգին թուլթ-տըղը քօլթիթիգայը թայիպ իթ-

մեթե, վե անըն՝ ախիլեն Մա-քեթուհիա Մեթրօթիլեթինե կոնգալար եաղուպ, հիւթեթեթե սատաթաթլարընը պեյան վե Օր-թօտօքս էհալիլեթին էպհեթ ճիհեթ թահաթլըգտա պուլընտըղարընը ալթ իթմեթիլեթին իշխան վեթիլեթի է-միլեթի միւնասիպեթիսիգ վե հա-գըգաթա մուղալիր կեթմեթտե տիրլեր, զիրա, շու սօն վաղըթ-լարտա Մեթրօթիլեթինե Բաթ-րիգանսեիլե կեթեթիլեթին օլան բեք չօգ րաթթիլար թաշարար-տա էհալիլեթին հալի մուհիպի թե-էսսիլեթ օլտըղընը նաղը ու իլգահ իթմիլեթի տիր:»

ՏԱԽԻԼԻԹԷ

Պուլկար վե թիւրք սինօրը իւ-զերինտե Գըզըլ-Ալուս նամ ճիլար-տա, կեյ-թեթե վե Պուլաթ-թեթե պեթլեթեթիլեթինե 5 նեֆեր թիւրք սինօր մուհաթըղալարը մայիս 10 աղալմը սաաթ 5տե պուլկար մու-հաթըղալարը իւղերինե հիւճուս իթմիլեթի, եարըմ սաաթ սօնրա 35 թիւրք ալթերի վե 27 սիլվարի տախի թիւրքլեր իմտատա եե-թիլեթիլեթի, Պու էսնատե Պուլկար կեթիլեթի գօճըլարը տախի պերի տեն եարտըմա եթիլեթիլեթի, թիւրք-լերի կերի թեպտիթեթի մուվա-ֆապ օլըրլար: Թիւրքլերտեն պիր տաքեր էթմիշ, պուլկարլարտան եօգ տըղ:

— Էքօ տե Պալգանըն ալտըղը մալիմաթա պինալե, վիւթեթա թեթիսի վե խարիճի նաղըրը Բա-շօ Բեթրիվ Սթամպուլ Պուլկար մասլահաթիլեթարըն վասիթաթ իլե թիւրքիլա պիր նօթա վե-րուպ, Պապը Ալի իլե հիւսնի միւնասեպաթտե պուլընմաթ ար-ղուսընտա օլտըղընը պեյան վե պու սալեթե Օսմանլը տեֆթիլե-նին տախի պուլկար էհալիլեթին գալըն թեթիլեթաթա նիհայեթ վե-րեհեթինե իմտա վար պուլընտը-ղընը ալթ էլլեթիլեթի:

— Բեթիլեթե կեթիլ, ելեթի գա-պինե Սօպրանիլե տաղըթմաթ ի-շխան ահեթ իթմեթեթեք մալիլեթ օլտըղը իւղըն մեպուլարըն էթթե-րիլեթի Զանթօթիլեթ տիր: Քեզա հիւսնի հարեթեթեթե պուլընան մե-մուրլարը տախի շիմտիլեթ թարտ իթմեթեթեթին ելեթ տախիլեթ նաղըրը Մ. Տիմիթի Բեթթօֆ Սօֆիա Բիլեթիսի Մ. Սթանպու-սեթիլեթիլեթի:

— Պուլկար րըզտըմընը ին-չաաթը խիթամ պուլմուշ օլմաղլե-Մայիս 18 տե րեսմի քիւշտը իճրա օլընմաթ, վե Ֆեխամ. Բեթնա վե հեյեթի վիլեթա հա-ղըր պուլընմաթալար:

— 1876տա Սօֆիաաա ասըլմը-լարն մեշհուր վաթանթերվեր վա-սիլ լեվաթիլեթիլեթի ճեթիլ ի-շխան վաթանը օլան Գարլօֆ չեհ-րինտե պիր սեյեթիլեթ օլընմաթ, իշպու սեյեթիլեթ թեթեթիլեթ րեսմեթ եարրն աղընմաթընտան, իճրալի-այընա րեյասեթ իթմեթ իշխան

Ֆեխ. Բեթնա տաթեթ օլընմը տըղը-
— Սօպրանիլե րեյիսի Մ. Զան-թօֆ Բեթեթապուրկա կիթմիշ տիր: Բուսթըլեր բարթիսին պու-միլեթին րեյիսի շու եօթըլընա հեր նե գատար ֆաթիլա ճա սեպեպ կեթթեթիլեթիլեթի իսեթե, տալ սաթ-սեթաթթիլեթաա սալիր օլտըղը ֆարգ օլընըր:

Թիւրքլերվեր ատտ օլընան վե րուս քօլթիլեթաթընա մուսալիթ թանըլմը օլան Սթանպուլիլեթ-լեթին Գապիլեթի թեթիլ իթմեթիլեթի իշխան հեր նե գատար Ֆեխ. Բեթն-սին թեթիլեթիլեթ րուսիլեթին րեյի-գաթանըլմը իսեթե, Մ. Զանթօֆ պու թեպտիլեթիլեթաա մեթիլեթ գալմաթալար, քիմ պիլիր Բե-թեթապուրկաա նեթեր անաթմաթ իթեթեթեթե տիր: Ֆադաթ հեր նե տե անաթմաթա, շու սրա րու-սիա Պալգան մեթեթիլեթիլեթ թիւրք հիւթիլեթիլեթի իլե միլայիլեթաա տա-րանմաթ մեհպուր պուլընտըղը-տան, շիմտիլեթ Պուլկարիլեթին ի-տարևսին Սթանպուլիլեթիլեթին էլիլեթ գալմաթըն տահա միւնասիպ ատտ իտեթեթե զանն իտեթիլ:

ԹԻԻՆՏԱՐԻԹԷ

ՎԱՌՆԱ, 14 Մայիս
ՉԱԽԻԼԻԹԷ

ՊՈՒԼՏԱՅ	
Վալիս Լիպ. 56-58 հքթ. 9.50/10.60	
Արապ լիպ. 57-62 հքթ. 10.-/11.80	
ԱՐԲԱ,	
Վալիս 100 քիլո 10.20/10.30	
Արապ 45-50 լիպ. հքթ. 5.80/ 6.20	
ՉԱՎՏԱՐ	
Վալիս 53 54 լիպ. 8.40/ 8.80	
Արապ 8.-/ 8.40	
ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիլո 18.-/24.-	
ԵՌԻԼԱՅ	
Վալիս 100 քիլո 19.40/10.50	
Արապ հեթթ. 5.40/ 5.50	
ՄԻՍԻՐ	
Վալիս լիպ. 56-57 հեթ. 8.40/ 8.60	
Արապ լիպ. 54-58 հքթ. 8.80/ 9.20	
ՏԱՐԷ	
Վալիս 100 քիլո 10.-/10.20	
Վալիս մուսթեթիլեթիլեթիլեթ ֆը-րանթլե, արապ կիլեթիլեթիլեթ նարո-լեթ 20.70 ֆրանք:	
Կիւնաթ 60/70 արապ վե 10/12	
Վալիս կեթեթեթ տիր:	

ՍԱՐԻԱՅԻԹԷ

Նարոլեթն 20.65 ֆրանք
Օսմ. լիլարը 22.85 ալթուս ֆրանք

ԹԱՏՐՈՆ «ՊՕՐԻՍ»

(Ամանային Երջան)

ՆԱՏԵԹՏԱ

Հայ գերասանական խոմը վաղը գիլեր ճիշտ ժամը 9ին պիտի ներկա-յացնէ՝

ՉԱՆԱՎԱՃԱՌԻՆ ԱՂԶԻԿԷ
Կղերեղ 3 արար

ԱՆՄԵՂ ՀԱՅՄԻՌՈՐԷ

Թատրախաղ 3 արար

Առաջնորդութեամբ Տ.ՊԱՊԱՆԱՆԻ

Одговорникъ Н. Дружески

Печатница Взаимность Варна